ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«01» 04 2024թ.
No 0313-3/19725-2024

ՔԱՂԱՔԱՑԻ Լ. ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՏԻԿԻՆ Զ. ՄԵԼՔՈՒՄՈՎԱՅԻՆ

Ի պատասխան Ձեր 14.03.2024թ.-ի գրության

Հարգելի տիկին Ծատուրյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի՝

- 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել (դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը: Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար չեն վճարում նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք, եթե բացակայում են նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման բազաները,

- 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ինչպես նաև հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են նույն կետով սահմանված դրույքաչափերով՝ մինչև 2400000 դրամ հաշվարկման բազայի դեպքում 18000 դրամ, 2400001-ից մինչև 6000000 դրամ հաշվարկման բազայի դեպքում՝ 24000 դրամ, 6000001-ից մինչև 12000000 դրամ հաշվարկման բազայի դեպքում՝ 48000 դրամ, 12000001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում՝ 120000 դրամ,

- 13-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածի 1-ին մասում չնշված անձինք դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն,

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

- 15-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները դրոշմանիշային վճարը կատարում են մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման համապատասխան բազաները:

ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (16.12.2022թ. ՀՕ-571-Ն օրենքի խմբագրությամբ) համաձայն՝ օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած են ճանաչվում՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքը, բացառությամբ այդ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերություններով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված անհատ ձեռնարկատերերը համարվում են դրոշմանիշային վճար վճարողներ և պարտավոր են մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով վճարել դրոշմանիշային վճար՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման բազաները:

Ընդ որում, հարկման ընդհանուր համակարգում գործող անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկում համախառն եկամուտ արտացոլված չլինելու դեպքում դրոշմանիշային վճարի հաշվարկման բազա չի առաջանում: Հետևաբար՝ դրոշմանիշային վճարի հաշվարկման բազայի բացակայության դեպքում անհատ ձեռնարկատերը դրոշմանիշային վճար չի վճարում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/1/2024

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.՝ ՎՄԸՎ հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060844779